ՀԿԴ/0258/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՀՀ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Գրիգորյան

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Մակյան
դատավորներ՝ Ա.Մարտիրոսյան
Կ.Ամիրյան

2026 թվականի նոյեմբերի 17-ին քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ս.ՉԻՉՈՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ

Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ

Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արշավիր Սերգեյի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2026 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ մեղադրյալ Արշավիր Սերգեյի Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի հունիսի 4-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության քննիչ Ն.Շահինյանի կողմից՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (2 դրվագ), 445-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ), 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (2 դրվագ), 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 314-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնվել է թիվ ******** քրեական վարույթը:

2025 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության քննիչ Ն.Շահինյանի կողմից ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 445-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետով և 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնվել է թիվ ******** քրեական վարույթը:

Նույն օրը թիվ ******** և թիվ ******** քրեական վարույթները միացվել են և նախաքննությունը շարունակվել է թիվ ******** համարով:

2025 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Դ.Հարությունյանի

որոշմամբ թիվ ******** քրեական վարույթով Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

2025 թվականի սեպտեմբերի 12-ին քննիչի որոշմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

2. 2025 թվականի սեպտեմբերի 26-ին թիվ ******** քրեական գործն ըստ մեղադրանքի՝ *Արշավիր Սերգեյի Հակոբյանի* ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ), *Արմինե Արարատի Ղավալյանի* ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 445-րդ հոդվածի 1-ին մասով և *Անդրանիկ Վահրամի Կարապետյանի*՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որին շնորհվել է թիվ ՀԿԴ/0258/01/25 համարը:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՀԿԴ/0258/01/25 դատավճռով, ի թիվս այլնի, մեղադրյալ Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) նախատեսված հանցանքներ կատարելու մեջ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ դրվագներից յուրաքանչյուրով Ա.Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի սանկցիայով նախատեսված՝ տուգանք՝ հանցանքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով՝ դրվագներից յուրաքանչյուրով Ա.Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված տուգանք՝ հանցանքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելով մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

4. Մեղադրյալ Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2026 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2025 թվականի նոյեմբերի 27-ի դատավճիռը թողնվել է անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Հակոբյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքաբերը փաստարկել է, որ վիճարկվող դատական ակտն իրավաչափ, հիմնավորված և պատճառաբանված չէ, դրանով թույլ է տրվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 7-րդ, 55-րդ, 70-րդ և 72-րդ հոդվածների պահանջների խախտում՝ այդպիսով թույլ տալով դատական սխալ, իսկ ստորադաս դատարանների հետևությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ *Համլետ Ղազարյանի* վերաբերյալ 2021 թվականի մարտի 9-ի թիվ ԱՎԴ/0104/01/19, *Վաչիկ Մնացականյանի* վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23ի թիվ ՎԲ-25/08, *Գերասիմ Վարպետյանի* վերաբերյալ 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ԵԿԴ/0289/01/17, *Սերգեյ Գրիգորյանի* վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 5-ի թիվ ԵԴ1/0288/13/23 և *Արամայիս Հակոբյանի* վերաբերյալ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին: Միևնույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել առերևույթ լուրջ դատական սխալ, քանի որ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության պայմաններում քրեական հետապնդումը չի դադարեցվել, կամ արդարացման դատավճիռ չի կայացվել:

6.1. Բողոքաբերի պնդմամբ՝ իրեն մեղսագրվող արարքները կատարվել են 2015 թվականի մայիս ամսից մինչև 2018 թվականի մարտի 6-ը և 2016 թվականի նոյեմբեր

ամսից 2021 թվականի մարտի 15-ը ներառյալ, և վերագրվող արարքների պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի և ՀՀ գործող քրեական օրենսգրքի համեմատական վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների մասով նախատեսում է անձի վիճակն ակնհայտորեն վատթարացնող նորմեր՝ ի համեմատ նախկին քրեական օրենսգրքի, հետևաբար ՀՀ գործող քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածը մեղադրյալի վիճակն այլ կերպ վատթարացնող նորմ է, որին հետադարձ ուժ տալն անթույլատրելի է: Բողոքաբերը նշել է, նաև որ իրեն մեղսագրվող արարքները, ըստ հանցագործությունների դասակարգման, հանդիսանում են ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործություններ, դրանք ավարտվել են 2021 թվականի մարտի 15-ին, հետևաբար արարքի կատարման պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված կանոնի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետի ավարտը 2026 թվականի մարտի 15-ն է, միևնույն ժամանակ, վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել կամ չի կասեցվել, ուստի անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն առանց որևէ պատճառաբանության վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ է համարել 2021 թվականի օգոստոսի 3-ը՝ հաշվի չառնելով, որ 2021 թվականի օգոստոսի 3-ին դադարել է Ա.Հակոբյանի պաշտոնավարումը, իսկ սեզոնային աշխատող Ա.Կարապետյանը՝ 2016 թվականի նոյեմբեր ամսից 2021 թվականի մարտի 15-ը ներառյալ՝ 82 օրերի ընթացքում, չի ներկայացել աշխատանքի, ուստի՝ տևող հանցագործությունն ավարտվել է 2021 թվականի մարտի 15-ին:

6.2. Բողոքաբերը գտել է, որ դատարանը պատիժ նշանակելիս պատշաճ չի գնահատել անձի հանրային վտանգավորությունը, առողջական վիճակը, սոցիալական դրությունը և մեղմացնող մյուս հանգամանքների համակցությունը, այլապես կարող էր հանգել այն եզրակացության, որ օրենքով նախատեսված նվազագույն պատիժն անգամ տվյալ դեպքում անհամաչափ խիստ է, և առկա են ՀՀ գործող քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման նախադրյալները: Ըստ բողոքաբերի՝ սույն գործով առկա է հանգամանքների այնպիսի համակցություն, որը վկայում է, որ մեղադրյալն այլևս չի ներկայացնում այնպիսի հանրային

վտանգավորություն, որը կհիմնավորեր օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կիրառելու անհնարինությունը:

Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանը որևէ կերպ չի պարզել մեղադրյալի առողջական վիճակի իրական բնույթը և սահմանափակվել է՝ արձանագրելով միայն այն, որ մեղադրյալն ունի առողջական խնդիրներ, և տուգանքի չափը սահմանելիս չի կատարել մեղադրյալի սոցիալական և գույքային դրության պատշաճ գնահատում, ինչի արդյունքում նշանակել է ակնհայտ անհամաչափ պատիժ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի որոշումը՝ մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքի գումարի չափը համամասնորեն նվազեցնել և նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ մեղադրյալ Ա.Հակոբյանին ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն արարքների կատարման համար, որ *«(...) նա, 2011 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 03-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ******** ******** ******** ******** ******** ********** պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենի պաշտոնը և հանդիսանալով հիշյալ կազմակերպության անունից հանդես գալու լիազորություններ ունեցող, իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2015-2021 թվականների ընթացքում պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ երկու դրվագով կատարել է ի պաշտոնե իրեն վստահված գույքի՝ ընդհանուր 327,567 ՀՀ դրամի վատնման եղանակով հափշտակություն և պաշտոնեական կեղծիք:*

Այսպես.

******** ******** ******** ******** ******** ******** ******** ******** ********

********, ՊՈԱԿ-ի տնօրեն ********** **********ի հետ կնքված 15.03.2014թ. թիվ 46, 15.11.2015թ. թիվ № 46, 30.03.2018թ թիվ 46 աշխատանքային պայմանագրերով, ինչպես նաև 15.11.2014թ. թիվ 43-Լ, 15.11.2016թ. թիվ 7-Լ և 15.11.2018թ. թիվ 6-Ն հրամաններով աշխատանքի է ընդունվել հիշյալ ՊՈԱԿ-ում՝ որպես դռնապան, օպերատոր հնոցապան, պահակ, մինչդեռ 2015 թվականի, մայիս ամսից մինչև 2018 թվականի մարտի 06-ը ներառյալ՝ 59 օրերի ընթացքում, ******** ******** աշխատանքի չի հաճախել և աշխատանքային պարտականությունները չի կատարել, որպիսի հանգամանքի մասին տեղյակ լինելու պայմաններում Արշավիր Հակոբյանը, աշխատավարձի վճարման հիմք հանդիսացող պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթղթերում՝ աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում, դիտավորությամբ ներառել է բովանդակությամբ կեղծ տվյալներ՝ ********** **********ի կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ, ինչի հիման վրա հաշվարկվել և վերջինիս որպես աշխատավարձ հավելյալ վճարվել է ընդհանուր՝ 136,382 ՀՀ դրամ:

Բացի այդ, ******** ******** ******** բնակավայրի բնակիչ Անդրանիկ Վահրամի Կարապետյանը, ՊՈԱԿ-ի տնօրեն Արշավիր Հակոբյանի՝ 15.11.2014թ. թիվ 43-Լ, 15.11.2016թ. թիվ 7-Լ, 15.11.2018թ. թիվ 6-Ն, 11.11.2019թ. թիվ 41-Ա և 13.11.2020թ. թիվ 24-Ա հրամանների հիմքով աշխատանքի է ընդունվել ՊՈԱԿ-ում՝ որպես հնոցապան, մինչդեռ 2016 թվականի նոյեմբեր ամսից 2021 թվականի մարտի 15-ը ներառյալ՝ 82 օրերի ընթացքում, Անդրանիկ Կարապետյանը չի հաճախել աշխատանքի և չի կատարել իր աշխատանքային պարտականությունները, որպիսի հանգամանքի մասին տեղյակ լինելու պայմաններում Արշավիր Հակոբյանը, աշխատավարձի վճարման հիմք հանդիսացող պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթղթերում՝ աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում, դիտավորությամբ ներառել է բովանդակությամբ կեղծ տվյալներ՝ Անդրանիկ Կարապետյանի կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ, ինչի հիման վրա հաշվարկվել և վերջինիս որպես աշխատավարձ հավելյալ վճարել է ընդհանուր՝ 191,185 ՀՀ դրամ»[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 100-101:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի դատավճռի համաձայն՝ *«(…) Վերոգրյալի հաշվառմամբ, Դատարանն արձանագրում է, որ Արշավիր Սերգեյի Հակոբյանի կողմից կատարված արարքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ /2 դրվագ/ (համապատասխանում են՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին) և ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով՝ /2 դրվագ/ (համապատասխանում են՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասին), (…) որոնք հանդիսանում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ, ուստի վերջիններիս նկատմամբ կարող է կիրառվել արագացված վարույթ:*

(…)

Դատարանը, ուսումնասիրելով մեղադրյալների անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, արձանագրում է հետևյալը.

Արշավիր Սերգեյի Հակոբյանը բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չի եղել:

(…)

Դատարանը Արշավիր Հակոբյանի, Արմինե Ղավալյանի և Անդրանիկ Կարապետյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է համարում նաև առաջադրված մեղադրանքներում մեղքն ընդունելը, ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, կատարած արարքների համար զղջալը, նաև Արմինե Ղավալյանի՝ ինսամքին երկու անչափահաս երեխաների առկայությունը:

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներ Արշավիր Հակոբյանի, Արմինե Ղավալյանի և Անդրանիկ Կարապետյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ քրեական վարույթի նյութերում առկա չեն: Կատարած արարքների համար մեղադրյալներ Արշավիր Հակոբյանը, Արմինե Ղավալյանը և Անդրանիկ Կարապետյանը ենթակա են քրեական պատասխանատվության և պատժի:

(…)

Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ մեղմացնող է, քանի որ դրանով սահմանված են գույքանքի առավել մեղմ չափեր: Մասնավորապես՝ եթե ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը որպես պատիժ է նախատեսում գույքանք՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, ապա 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը նախատեսում է գույքանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով: Ինչպես նաև, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասը ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ի՝ մեղմացնող է, քանի որ դրանով ևս սահմանված են գույքանքի առավել մեղմ չափեր: Մասնավորապես՝ եթե ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասը որպես պատիժ է նախատեսում գույքանք՝ առավելագույնը քսանապատիկի չափով, ապա 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է գույքանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

Հետևապես, Դատարանն արձանագրում է, որ Արշավիր Հակոբյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ երկու դրվագով, ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և Անդրանիկ Վահրամի Կարապետյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 1 դրվագով, նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների համար, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին և 314-րդ հոդվածի 1-ին մասին պատժի մասով պետք է տրվի հետադարձ ուժ և մեղադրյալների

պատիժները դիտարկվեն համապատասխանաբար՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով և նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով տուգանքների շրջանակներում:

Այսպես՝ Դատարանը, հաշվի առնելով Արշավիր Հակոբյանի, Արմինե Ղավալյանի և Անդրանիկ Կարապետյանի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, մասնավորապես՝ այն, որ կատարված արարքները դասվում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների շարքին, այդ թվում՝ նրանց գործողությունների վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, գտնում է, որ մեղադրյալների նկատմամբ պատիժ պետք է նշանակել տուգանքի ձևով, մասնավորապես՝ Արշավիր Հակոբյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի համար պատիժ պետք է նշանակել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ տուգանք՝ հանցանքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի համար՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ տուգանք՝ հանցանքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի համար՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանք՝ հանցանքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի համար՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանք՝ հանցանքի

կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

(…)»[2]*:*

9. Վերաքննիչ դատարանը, 2026 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է հետևյալը. *«(…) Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ մեղադրյալի՝ դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելը, առաջադրված մեղադրանքներում մեղքն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը, կատարած արարքների համար զղջալը, թոշակառու լինելը և առողջական որոշակի խնդիրներ ունենալը դուրս չեն սովորականի շրջանակներից և այն ասպիճանի առանձնահատուկ չեն, որ վերածվեն բացառիկության:*

*Անդրադառնալով արդեն մեղադրյալի կողմից բարձրացված 2-րդ հարցին, այն է՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ փաստարկներին, մասնավորապես՝ (…) Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ 2025 թվականի սեպտեմբերի 11-ին հսկող դատախազի որոշմամբ Արշավիր Սերգեյի Հակոբյանի նկատմամբ 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում այն արարքների համար, որ նա՝ «(…) 2011 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 03-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ******** ******** ********** անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենի պաշտոնը և հանդիսանալով հիշյալ կազմակերպության անունից հանդես գալու լիազորություններ ունեցող, իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2015-2021 թվականների ընթացքում պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ երկու դրվագով կատարել է ի պաշտոնե իրեն վստահված գույքի՝ ընդհանուր 327,567 ՀՀ դրամի վատնման եղանակով հափշտակություն և պաշտոնեական կեղծիք:*

---

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 39-46:

(…)

Արձանագրելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ համաձայն մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման որոշման՝ վերջինիս կողմից կատարված վերջին արարքը ավարտվել է 2021 թվականի օգոստոսի 03-ին, այլ ոչ թե՝ մարտի 15-ին, հետևաբար՝ մեղադրյալի կողմից մատնանշված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները սույն որոշման կայացման օրվա դրությամբ լրացած չեն, որպիսի հանգամանքով պայմանավորած, Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ առկա չէ այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմք:

Նման պայմաններում՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով թույլ չի տրվել դատական սխալ, այդ թվում՝ նաև՝ նյութաիրավական կամ քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ գործի ելքի վրա և գործով կայացվել է այն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ բողոքաբերի կողմից բարձրացված հարցերը վերաբերում են իր նկատմամբ դատավճռով նշանակված պատժի արդարացիությանը և քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններին, գտնում է, որ սույն գործով պատժի արդարացիության հարցին անդրադառնալն իրավական արժեք կունենա միայն բարձրացված մյուս՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության վերաբերյալ հարցին անդրադառնալու և բացասական պատասխան տալու պարագայում:

Այսպիսով, սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով չդադարեցնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 12-44:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

(…)

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից (…)»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն.

«(…)

2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

(…)»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն.

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(…)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում վերջին արարքը կատարելու պահից:

(…)»:

12. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ա.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին հսկող դատախազի որոշման համաձայն՝ Ա.Հակոբյանը 2011 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցրել է ********** «********** ********** ********** ********** ********» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը և հանդիսացել է հիշյալ կազմակերպության անունից հանդես գալու լիազորություններ ունեցող, իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ: Վերջինը, **2015-2021 թվականների ընթացքում** պաշտոնեական դիրքն օգտագործելով, երկու դրվագով կատարել է ի պաշտոնե իրեն վստահված գույքի՝ ընդհանուր 327,567 ՀՀ դրամի վատնման եղանակով հափշտակություն և պաշտոնեական կեղծիք:

- Առաջին ատյանի դատարանը, արագացված վարույթի կարգով քննելով թիվ ՀԿԴ/0258/01/25 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արշավիր Սերգեյի Հակոբյանի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 2 դրվագով ու 445-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագով, Արմինե Արարատի Ղավալյանի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու 445-րդ հոդվածի 1-ին մասով, և Անդրանիկ Վահրամի Կարապետյանի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 2 դրվագ, **2025 թվականի նոյեմբերի 27-ի** դատավճռով, ի թիվս այլնի, Ա.Հակոբյանին

մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 2 դրվագ և ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագ հանցանքներ կատարելու մեջ:

- 2026 թվականի հունիսի 15-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ մեղադրյալ Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքը, որով վերջինս, ի թիվս այլնի, խնդրել է իրեն ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

- Վերաքննիչ դատարանը 2026 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ մերժել է մեղադրյալ Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքը՝ ի թիվս այլնի, փաստելով, որ համաձայն մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման որոշման՝ վերջինիս կողմից կատարված վերջին արարքն ավարտվել է 2021 թվականի օգոստոսի 3-ին, այլ ոչ թե՝ մարտի 15-ին, հետևաբար մեղադրյալի կողմից մատնանշված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները որոշման կայացման օրվա դրությամբ լրացած չեն:

14. Նախևառաջ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ մեղադրյալ Ա.Հակոբյանի կողմից կատարվել են փոխկապակցված և մեկը մյուսից ածանցված կամ հաջորդող հանցանքներ՝ այն է պաշտոնեական կեղծիք, որի արդյունքում վերջինի կողմից վատնման եղանակով հափշտակվել է իրեն վստահված գույքը: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ երկու հանցանքներից մեկը՝ պաշտոնեական կեղծիքը ձևական հանցակազմ է, իսկ վստահված գույքի հափշտակությունը՝ նյութական, և եթե պաշտոնեական կեղծիքի դեպքում այդ հանցանքն ավարտված է համարվում պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելու, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելու կամ հանձնելու պահից սկսած, ապա վստահված գույքը հափշտակելը՝ այն պահից, երբ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է առաջանում:

14.1. Կոնկրետ սույն գործի պայմաններում՝ ըստ Ա.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստակազմի՝ վերջինս իրեն վերագրվող արարքները կատարել է 2015-2021 թվականների

ընթացքում: Առաջին դրվագը (******** ******** ******** վերաբերյալ), ըստ մեղադրանքի՝ թվագրվել է հետևյալ կերպ՝ **2015 թվականի մայիս ամսից մինչև 2018 թվականի մարտի 6-ը** ներառյալ՝ 59 օրերի ընթացքում, ******** ******** աշխատանքի չի հաճախել, իր պարտականությունները չի կատարել**,** սակայն Արշավիր Հակոբյանի կողմից նրա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում դիտավորությամբ բովանդակությամբ կեղծ տվյալներ ներառելով՝ հաշվարկվել և ******** ******** որպես աշխատավարձ հավելյալ վճարվել է ընդհանուր՝ 136,382 ՀՀ դրամ:

Երկրորդ դրվագը (Անդրանիկ Վահրամի Կարապետյանի վերաբերյալ դրվագ)՝ վերջին արարքը, թվագրվել է հետևյալ կերպ՝ **2016 թվականի նոյեմբեր ամսից 2021 թվականի մարտի 15-ը** ներառյալ Ա.Կարապետյանը աշխատանքի չի հաճախել, իր պարտականությունները չի կատարել**,** սակայն Արշավիր Հակոբյանի կողմից նրա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում դիտավորությամբ բովանդակությամբ կեղծ տվյալներ ներառելով՝ հաշվարկվել և Ա.Կարապետյանին որպես աշխատավարձ հավելյալ վճարվել է ընդհանուր՝ 191,185 ՀՀ դրամ:

14.2. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ուշադրություն հրավիրել ևս մեկ կարևոր հանգամանքի առ այն, որ սույն քրեական գործը քննվել է արագացված վարույթի կարգով, ինչից հետևում է, որ դատարանի կողմից չի հետազոտվել որևէ ապացույց, նկատի ունենալով, որ մեղադրյալի համար պարզ է եղել ներկայացված մեղադրանքը, և վերջինը համաձայն է եղել իրեն ներկայացված մեղադրանքի հետ: Արագացված վարույթի պայմաններում դատարանը հաստատված է համարում մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստերը՝ առանց ապացուցների՝ օրենքով նախատեսված հետազոտման անհրաժեշտության:

Սույն քրեական գործի պայմաններում, հաշվի առնելով մեղադրյալ Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքների բնույթը՝ արարքի կատարման ավարտի պահի տեսանկյունից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հակոբյանին ներկայացված մեղադրանքից ակնհայտ պարզ չէ նրան վերագրվող վերջին հանցանքի կատարման ավարտի կոնկրետ օրը, քանի որ արարքներից վերջինը՝ վստահված գույքի հափշտակությունը, ավարտվել է այն պահից, երբ իրեն վստահված գույքը՝ տվյալ դեպքում Ա.Կարապետյանին հավելյալ վճարված

աշխատավարձը, ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել, որն էլ հստակ օրով մեղադրանքի փաստակազմում նշված չէ: Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից որպես հանցանքի կատարման ավարտի օր՝ 2021 թվականի մարտի 15-ը դիտարկելու վերաբերյալ դատողություններին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դա Ա.Կարապետյանի կողմից աշխատանքի չհաճախելու վերջին օրն է, որի վերաբերյալ Ա.Հակոբյանի կողմից կեղծ տվյալներ ներկայացնելու արդյունքում է տեղի ունեցել իրեն վստահված գույքի հափշտակություն, իսկ այդ արարքի կատարման ավարտի վերաբերյալ հստակ նշում չկա մեղադրանքում: Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածով սահմանված քրեական գործի քննության ընթացքում դատաքննության սահմաններին ներկայցված պահանջն առ այն, որ դատարանն իրավասու է հաստատված կամ հերքված համարելու միայն մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները: Այսինքն, ի տարբերություն իրավական որակման, դատարանը մեղադրանքի որևէ փաստական հանգամանք փոխելու իրավասությամբ օժտված չէ: Ավելին, սույն դեպքում, երբ քրեական գործը քննվել է արագացված վարույթի կարգով, դատարանը չի հետազոտել որևէ ապացույց՝ մեղադրանքում նշված փաստական հանգամանքները հաստատելու համար, այլ բավարար է եղել միայն, որ բացակայի մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականը մեղադրանքի փաստական հանգամանքներին ակնհայտորեն չհամապատասխանելու իրավական խնդիրը, որը արագացված վարույթ կիրառելու արգելք հանդիսացող հիմքերից մեկն է:

14.3. Այսպիսով, այն պայմաններում, երբ Առաջին ատյանի դատարանի կողմից արագացված վարույթի կարգով է քննվել քրեական գործն, ու հաստատվել է մեղադրանքը՝ ներկայացված փաստական և իրավական հիմնավորումներով հանդերձ, Վճռաբեկ դատարանն իրավաչափորեն զրկված է քրեական գործի նյութերի հետազոտման միջոցով արարքի կատարման ավարտի վերաբերյալ տվյալի օբյեկտիվ գնահատման հնարավորությունից: Այլ կերպ՝ Ա.Հակոբյանին ներկայացված մեղադրանքի փաստակազմի բովանդակությունից պարզ չէ թե մինչև Ա.Հակոբյանի պաշտոնից ազատումը (ըստ մեղադրանքի՝ 2021 թվականի օգոստոսի 3) երբ է նրա կողմից կատարված հանցանքներից վերջինն ավարտված համարվել,

քանի որ որպես մեղսագրված արարքների կատարման ժամանակահատված նշված է **2015-2021 թվականներ,** իսկ թե երբ է Ա.Հակոբյանն իրական հնարավորություն ունեցել ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրեն վստահված գույքը, սույն դեպքում Ա.Կարապետյանի հավելյալ վճարված աշխատավարձը, հստակ նշված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևություններին առ այն, որ Ա.Հակոբյանին վերագրվող վերջին արարքն ավարտվել է 2021 թվականի օգոստոսի 3-ին, այլ ոչ թե՝ մարտի 15-ին՝ այն կապելով Ա.Հակոբյանի պաշտոնավարման ավարտի օրվա հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև պաշտոնավարման ավարտի պահը կանխորոշիչ դեր չունի այդ հանցանքի ավարտի կատարման պահի հետ և, ըստ էության, այդ կանոնով առաջնորդվելը չի բխում սահմանված հանցագործության օբյեկտիվ կողմի՝ հանրորեն վտանգավոր արարքի կատարման ժամանակի մասով օրենսդրի սահմանած տրամաբանությունից, այնուհանդերձ կոնկրետ սույն գործի պայմաններում վերոշարադրյալ հետևությունների տեսանկյունից ևս այն տրամաբանական և ընդունելի է, քանի որ Ա.Հակոբյանն օբյեկտիվորեն պաշտոնավարման ավարտից հետո չէր կարող կատարել իրեն ներկայացված հանցանքը, քանի որ սույն դեպքում այդ արարքն ուղիղ կապված է իր պաշտոնեական լիազորությունների իրականացման հետ: Ինչ վերաբերում է վերագրվող արարքն ավելի վաղ ավարտված լինելու վերաբերյալ բողոքաբերի պնդումներին, ապա այն չի բխում մեղադրանքի փաստակազմից:

14.4. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հաշվի առնելով ինչպես Ա.Հակոբյանի կողմից կատարված վերջին հանրորեն վտանգավոր արարքի՝ վստահված գույքի հափշտակության կատարման ժամանակի մասով օրենսդրի սահմանած տրամաբանությունը, այնպես էլ մեղադրանքի փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պայմաններում, երբ քրեական գործը քննվել է արագացված վարույթի կարգով, և Ա.Հակոբյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշմամբ հանցանքների կատարման ժամանակի վերաբերյալ այլ տվյալ առկա չէ, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները ևս հիմնավոր են:

15. Վերոգրյալի հաշվառմամբ՝ անդրադառնալով Ա.Հակոբյանին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

- Ա.Հակոբյանի մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճռի բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել **2026 թվականի հուլիսի 3-ին,** և նշված որոշման դեմ մեղադրյալ Ա.Հակոբյանի կողմից վճռաբեկ բողոք է բերվել **2026 թվականի օգոստոսի 17-ին**, որը Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ է ընդունվել **2026 թվականի սեպտեմբերի 8-ին**, իսկ այդ օրվա դրությամբ, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել,

- Դատվածությունների և հետախուզման առկայության Ձև 8 հարցման պատասխանի համաձայն՝ Ա.Հակոբյանին մեղսագրված հանցանքներն ավարտված համարելու օրվանից նրա կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք կատարած լինելու մասին տվյալ առկա չէ[4]:

15.1. Ուստի, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ԱՀակոբյանի կողմից արարքի կատարման պահին գործող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները և նկատի ունենալով, որ Ա.Հակոբյանին մեղսագրված արարքներից վերջինի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի՝ որպես միջին ծանրության հանցանքի համար ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրանալու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ առկա չի եղել օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, գտնում է, որ նրա նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

16. Այսպիսով սույն որոշման կայացման պահին առկա է մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը քրեական

[4] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի պետ Գ.Բեգոյանի 2026 թվականի նոյեմբերի 4-ի թիվ թիվ 88/1290 գրությունը:

պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցած լինելու հետևանքով դադարեցնելու բոլոր հիմքերը, ուստի անհրաժեշտ է Ա.Հակոբյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի որոշումը բեկանել՝ Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Միաժամանակ մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության պայմաններում անդրադառնալով Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, պետք է վերացնել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի՝ իր նկատմամբ դատավճռով նշանակված պատժի անարդարացիության վերաբերյալ սույն որոշման 6.2-րդ կետում նշված փաստարկներին անդրադառնալն առարկայազուրկ է և այլևս սույն դեպքում չունի իրավական արժեք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արշավիր Սերգեյի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի որոշումը բեկանել:

2. Արշավիր Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ)

քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

3. Արշավիր Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված բացակայելու արգելքը վերացնել:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Ս.ՉԻՉՈՅԱՆ

Դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դ.ՎԵՔԻԼՅԱՆ